

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԱՀԱՆԵ ՑՈՒՐԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐԴԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱՊԱՇԱՐԻ

ՈՃԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆեսոր
Բարլեզիզյան Արամ Կարապետի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր
Բաղդասարյան Հասմիկ Գրիգորի
բ.գ.թ., դոցենտ
Պետրոսյան Վարդուհի Գևորգի

Առաջատար
կազմակերպություն՝

Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. սեպտեմբերի 28-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Մեղմագիրն առաքվել է 2022 թվականի հուլիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Երբ խոսվում է որևէ լեզվի հարստության մասին, նախ և առաջ նկատի է առնվում նրա բառապաշարի ու արտահայտչամիջոցների բազմապիստությունը, որը խոսքը դարձնում է պատկերավոր, հուզական և իմաստավորման առումով կատարյալ, ինչի շնորհիվ հնարավոր է լինում հաղորդել մարդկային մտքի ամենանրբին երանգները:

Այդ արտահայտչամիջոցների մեջ իրենց ուրույն ու անփոխարինելի տեղն ունեն դարձվածքները, ժողովրդի կողմից ստեղծված ու դարերով հղկված միավորները, որոնք յուրաքանչյուր լեզվի բառապաշարի անքակտելի մասն են կազմում:

XX դարի երկրորդ կեսին տարբեր լեզուների դարձվածաբանությանն առնչվող ինդիքների ուսումնասիրությունն այնքան ծավալվեց ու տարածում ստացավ, որ դարձվածաբանությունը ձեռք բերեց լեզվաբանական ինքնուրույն ոլորտի կարգավիճակ՝ ընդլայնելով հետազոտության դաշտն ու քննվող հարցերի շրջանակը: Դարձվածաբանության սերտ կապը լեզվաբանական այլ գիտակարգերի, հատկապես իմաստաբանության, բառագիտության ու ոճաբանության հետ, անխուսափելիորեն առաջ մղեց դարձվածաբանությունը լեզվաբանության առաջատար ճյուղերից մեկը դիտարկելու անհրաժեշտությունը:

Ուշադրությունից դուրս չմնացին ռոմանական լեզուները, մասնավորապես ֆրանսերենը: Լույս տեսան Ժ. Բեռնարի¹, Պ. Գիրոյի², Ա. Սովաժոյի³, Ա. Ռեյի⁴, խորհրդային լեզվաբաններից Վ. Գակի⁵, Զ. Լևիտի⁶, Ա. Նազարյանի⁷, Գ. Սոկոլովայի⁸ և այլոց աշխատությունները:

Ֆրանսերենը, լինելով եվրոպական առաջատար լեզուներից մեկը, օժտված է չափազանց հարուստ դարձվածաբանությամբ, որում արտացոլվում են հանրային կյանքի բոլոր ոլորտները: Իսկ այդ դարձվածամիավորների մեջ իրենց նշանակալի տեղն ունեն խոսակցական ֆրանսերենի դարձվածքները՝ խիստ ինքնատիպ, անկրկնելի ու բացառիկ, որոնք գրական ծագում ունեցող դարձվածքների կողքին կազմում են ֆրանսերենի ամբողջական դարձվածապաշարի մեծածավալ մի հատվածը:

¹ Bernard G. Les locutions verbales françaises // *La linguistique*, 10-2, 1974, p. 5-12.

² Guiraud P. L'argot. Paris: Presses Universitaire de France, 1969.

³ Sauvageot A. Portrait du vocabulaire français. Paris: Larousse, 1964.

⁴ Rey A. et Chantreau S. Dictionnaire des expressions et locutions. Paris: Le Robert, 1997.

⁵ Гак В. и др. Французско - русский фразеологический словарь, около 3500 фразеологических единиц, под редакцией Я. И. Рецкера. Москва: Гос. издат. иностранных и национальных словарей, 1963.

⁶ Левит З. Н. К проблеме аналитического слова в современном французском языке. М.: Высшая школа, 1968.

⁷ Назарян А. Г. Фразеология современного французского языка. М.: Высшая школа, 1987.

⁸ Соколова Г. Г. Фразеобразование во французском языке. М.: Высшая школа, 1987.

Ատենախոսության ուսումնասիրության **օբյեկտը** ֆրանսերենի դարձվածաբանությունն է իր ընդհանուր օրինաչափություններով ու դրսևորումներով, իսկ ուսումնասիրության **առարկան**՝ արդի ֆրանսերենի խոսակցական դարձվածքների ուսումնասիրությունն իր ոճիմաստային առանձնահատկություններով:

Ուսումնասիրության **նպատակը** ֆրանսերենի դարձվածահամակարգում խոսակցական դարձվածքների տեղի և դերի գնահատումը և բնորոշ գծերի վերհանումն ու պարզաբանումն է: Մույն նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. հիմնավորել դարձվածաբանության ինքնուրույն գիտակարգ լինելու փաստը՝ դարձվածքները բնութագրելով իբրև լեզվամշակութային պատկերացումների յուրօրինակ արտահայտություններ,
2. ներկայացնել խոսակցական ֆրանսերենի ենթառճերի արտացոլումը դարձվածաբանական միավորներում,
3. ուսումնասիրել դարձվածաբանությանը ներհատուկ մի շարք յուրահատկությունների դրսևորումները խոսակցական դարձվածքներում, հատկապես՝
 - ա) ներքին ձև և պատճառաբանվածություն,
 - բ) բաղադրիչային ակտիվություն,
 - գ) բազմիմաստություն և մենիմաստություն,
 - դ) հոմանիշություն և տարբերակայնություն,
4. վերհանել խոսակցական ֆրանսերենի դարձվածամիավորների պատկերային ինքնատիպությունն ու ոճահնարների բազմապիստությունը, մասնավորապես հայերենի զուգադրությամբ:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է դարձվածաբանությանն առնչվող խնդիրների նկատմամբ հարաճուն հետաքրքրությամբ, խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշարի շարունակական համալրման փաստով, նրա հիմնական առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությամբ և մանավանդ, այն առումով, որ այս ասպարեզում որևէ առանձին, փոքրիշատե ամբողջական ուսումնասիրություն չկա: Արդիական պիտի համարել նաև այն, որ առաջին անգամ հայերենի հետ ըստ անհրաժեշտության կատարվող զուգադրական քննությունը առավել ակնբախ է դարձնում լեզուներից յուրաքանչյուրի դարձվածաբանության մի շարք յուրահատկություններ, որոնք մեկուսի ուսումնասիրության պարագայում մնում են ստվերում, և որոնց բացահայտումը նոր՝ հակադրական հետազոտությունների դաշտ է ստեղծում:

Աշխատության **գիտական նորույթը** խոսակցական դարձվածքների համակարգված կերպով ներկայացումն է ֆրանսերենի լայնածավալ դարձվածաբանության շրջանակներում՝ հիմնվելով գրական դարձվածքների համեմատությամբ դրանց յուրահատկությունների բացահայտման և բոլորովին մեկ այլ հորինվածք ունեցող լեզվի՝ հայերենի հետ զուգադրության վրա:

Ատենախոսության **տեսական արժեքը** խոսակցական դարձվածքներին բնորոշ գծերի վերհանումն ու համակարգումն է, դրանց ստեղծմանն ու զարգացմանը բնորոշ օրինաչափությունների բացահայտումը, որոնք կարող են իրենց նպաստը բերել բնագավառին վերաբերող հետազոտությունների ծավալմանն ու հիշյալ փաստերի արժևորմանը, ինչպես նաև լեզվամշակութաբանական տեսությունների ընդարձակմանը:

Աշխատանքի **գործնական արժեքը** նրա արդյունքների հնարավոր կիրառումն է բառագիտության, ոճաբանության և դարձվածաբանության դասընթացներում, գործնական ֆրանսերենի ուսումնասիրությանը նվիրված դասագրքերում ու ձեռնարկներում և, հատկապես, երկլեզվյան բառարանագրության մեջ (ֆրանսերեն - հայերեն, հայերեն - ֆրանսերեն):

Սույն ուսումնասիրությունն իրագործելու համար ճանաչողության համընդհանուր մեթոդի կողքին լայնորեն կիրառվել են ոճիմաստային, զուգադրական և բաղադրիչային, մասամբ նաև՝ ստուգաբանական և վիճակագրական վերլուծության մեթոդները:

Ատենախոսության **փաստական նյութը** զանազան բառարաններից և ֆրանսիական գեղարվեստական գրականության XIX – XX դարերի գրական տարբեր ուղղությունների պատկանող հեղինակների 50 անուն ստեղծագործություններից քաղված առավել ուշագրավ և ուսումնասիրվող նյութի տեսանկյունից որոշակի կարևորություն ունեցող 1028 խոսակցական դարձվածքներն են, որոնք հայերեն համարժեքներով ներկայացված են աշխատության վերջում՝ որպես հավելված:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, գրականության և գրական աղբյուրների ցանկերից և հավելվածից:

Առաջին գլուխը («Դարձվածաբանությունը լեզվաբանական ուսումնասիրությունների հարացույցում») ընդգրկում է հետևյալ ենթաբաժինները. «Դարձվածաբանությունը որպես լեզվաբանական ինքնուրույն գիտակարգ և դարձվածքների տեղը խոսակցական ֆրանսերենում», «Դարձվածաբանական միավոր» հասկացության էությունը և տարատեսակները», «Խոսակցական ֆրանսերենի ենթառճերը և դրանց արտացոլումը դարձվածաբանական միավորներում»:

Այս գլխում նախ և առաջ դարձվածաբանությունը սահմանվում է որպես լեզվաբանական առանձին գիտակարգ, որից հետո սահմանազատվում են խոսակցական ֆրանսերենի տարբեր ենթառճերին պատկանող դարձվածքները: Ընդհանրապես ընդունված է, որ դարձվածաբանական միավորներն առավելապես պատկանում են մտերմիկ - խոսակցական կամ հասարակաբան, ժողովրդախոսակցական ենթառճերին: Ասացվածքները, առանձերը կամ հատկաբանական /իդիոմատիկ/ արտահայտությունները ժողովրդական ծագում ունեն: Բացի դրանից, վերջիններս և քարացած շատ այլ արտահայտություններ,

չեն սահմանափակվում լեզվական մեկ ենթառճով: Այդ միավորների համար գոյություն ունեն նույնքան ենթառճեր, որքան ցանկացած լեզվական նշանի համար: Յուրաքանչյուր խոսակցական իրավիճակ թելադրում է համապատասխան ենթառճի ընտրություն, և այդ ընտրությունը հավասարապես կատարվում է դարձվածաբանության մեջ: Ստորև օրինակներով ցույց տանք, թե ինչպես նույն հասկացությունը կարող է տարբեր դարձվածքներով արտահայտվել՝ ըստ համատեքստի ոճիմաստային պահանջի.

Rire très fort – բարձրաձայն ծիծաղել (ընդհանրական իմաստը)

1. **niveau soutenu** – բարձր ոճ

rire à gorge déployée; rire aux éclats; rire à pleine gorge - լիաթոք՝ քահ-քահ՝ կոկորդով մեկ ծիծաղել (բառացի՝ կոկորդը բաց արած ծիծաղել)

2. **niveau littéraire normal** – ընդհանուր գրական ոճ

rire aux larmes; rire à en pleurer - արտասվելու չափ ծիծաղել, ծիծաղից աչքերն արցունքով լցվել

3. **niveau familier** – մտերմիկ - խոսակցական ենթառճ

rire comme un bossu - անզուսպ ծիծաղել, ծիծաղից թուլանալ՝ ուշաթափվել՝ փորը բռնել (բառացի՝ կուզիկի պես ծիծաղել)

4. **niveau vulgaire** – գոեհիկ՝ գոեհկաբան ենթառճ

se dilater la rate; se fendre la poire (la margoulette) - հռհռալ, սեպերը բաց անել՝ ցույց տալ (բառացի՝ փայծաղը լայնացնել)

5. **niveau argotique** – ժարգոնային ոճ

se troncher la gueule - ռեխը բանալ՝ բացել (բառացի՝ երախը ճղել)

Այս գլխում անդրադարձ ենք կատարել դարձվածքի սահմանման, դրա յուրահատկությունների ընկալման հարցում տարբեր գիտնականների մոտեցումներին՝ առաջադրելով դարձվածքի, դարձվածաբանական միավորի մեր սահմանումները. **Դարձվածքը սովյալ ազգամշակույթին յուրահատուկ, բաղադրիչների ամբողջական կամ մասնակի իմաստային ձուլվածությամբ հատկանշվող և որոշակի բովանդակությամբ ու փոխաբերական-այլաբանական իմաստով օժտված կայուն, վերաիմաստավորված բառակապակցություն է:** «Դարձվածաբանական միավոր» հասկացությունը սովորական բառամիավորներից տարբերվող և ուրույն հատկանիշներով օժտված լեզվական արտահայտչամիջոցների ամբողջություն է, առանց որոնց մեր խոսքը կվերածվեր միապաղաղ ու տաղտկալի բառակույտի:

Առաջին գլխի վերջում մեր հետաքրքրության առանցքում ընդհանուր խոսակցական ֆրանսերենի ենթառճերին պատկանող դարձվածամիավորներն են, որոնք ներկայացրել ենք հայերեն բառացի կամ ազատ թարգմանություններով, հնարավոր համարժեքներով.

ա) միատարր (ընդհանուր, համասեռ, ստանդարտ) խոսելաճճ
c'est pas évident - դժվար թե, հազիվ թե (բառացի՝ ակնհայտ՝ ակներև չէ)

բ) մտերմիկ – խոսակցական ենթաճճ
crois ça et bois de l'eau fraîche – գրպանդ լայն բաց, ախորժակ պահիր (բառացի՝ հավատա դրան և սառը ջուր խմիր)

գ) հասարակարան, ժողովրդախոսակցական ենթաճճ
crever l'écran - անընդհատ էկրանին լինել՝ երևալ, բազում կինոնկարներում խաղալ (բառացի՝ էկրանը տանջահարել)

դ) գոեհիկ, գոեհկարան ենթաճճ
envoyer distinguer qn – մեկին ռադ անել, վոնդել, գրողի ծոցն ուղարկել

ե) ժարգոնային ենթաճճ
être au pognon – փողի տոպրակ՝ շատ հարուստ՝ ունևոր լինել

Երկրորդ գլուխը՝ «**Խոսակցական դարձվածքների դասակարգումը: Դարձվածային հումանիշություն և տարբերակայնություն**», բաղկացած է հետևյալ հինգ ենթաբաժիններից՝ «Դասդասումն ըստ գործածության ոլորտների ու խոսքիմաստային պատկանելության», «Ներքին ձև և պատճառաբանվածություն», «Դարձվածաբանական միավորների բաղադրիչային ակտիվության մասին», «Դարձվածային մենիմաստություն և բազմիմաստություն», «Դարձվածային հումանիշություն և դարձվածային տարբերակայնությունը»:

Այս գլուխը նվիրված է խոսակցական դարձվածքների դասակարգմանը: Այստեղ փորձել ենք դասդասել խոսակցական ֆրանսերենի դարձվածքները ըստ ոլորտների ու խոսքիմաստային պատկանելության՝ ամբողջն ամփոփելով բնագրային օրինակներով:

1. Մարդու (մարդկային) կյանք

avalier son bulletin de naissance – մեռնել, ուրբերը ձգել

2. Անհատին բնորոշ՝ առանձնահատուկ գծեր

avoir du chien – հրապուրիչ՝ գրավիչ լինել (կնոջ մասին)

3. Անձնական կյանք, մարդկային փոխհարաբերություններ

faire le joli cœur – հաճոյախոսել, սիրախոսել, կնամեծար երևալ

4. Հանրային կյանք

mettre du beurre dans les épinards – գործերը բարելավել, ավելի շատ վաստակել

5. Արվեստ, գրականություն, մամուլ

chanter comme une casserole – սխալ՝ ոչ ճիշտ երգել

6. Ուսում, ուսումնաստություն, սպորտ

appuyer sur le champignon – արագությունն ավելացնել

7. Քաղաքականություն

*cheval de retour – վարկաբեկված՝ անվանարկված՝ հեղինակագուրկ
քաղաքական գործիչ, որն անընդհատ իշխանության է վերադառնում:*

Այս գլխում անդրադարձել ենք խոսակցական դարձվածքների ներքին ձևին, պատճառաբանվածությանը, ապապատճառաբանվածությանը, դարձվածային միավորների բաղադրիչային ակտիվությանը, կազմաբանություններին և կենդանուններին: Միանգամայն տարբեր լեզուներում, ինչպիսիք են ֆրանսերենը և հայերենը, ներքին ձևի մի շարք նմանություններ են արձանագրվում, որոնք առավելապես բնորոշ են երկու լեզուների խոսակցական ոճին և փոխազդեցությունների կամ պատճենումների հետևանք չեն, այլ՝ առօրյա կյանքի ու կենսագործունեության ընդհանրության արդյունք: Որոշ դեպքերում շեղումներն աննշան են, մասնակի, առկա է զգալի նմանություն, հաճախ միայն մեկ բաղադրիչի տարբերությամբ: Օրինակ՝ *scier le dos à qn (բառացի՝ մեկի մեջքը սղոցել) – հայ. մեկի ականջը սղոցել, avoir une mémoire de lièvre (բառացի՝ նապաստակի հիշողություն ունենալ) – հայ. հավի հիշողություն ունենալ, se casser le nez sur qch (բառացի՝ քիթը ինչ-որ բանի վրա կոտրել) – հայ. քիթը քարին առնել* և այլն:

Քիչ չեն դեպքերը, երբ առկա է պատկերի ամբողջական նմանություն: Օրինակ՝ *se mordre la langue – լեզուն կծել, avaler sa langue – լեզուն կուլ տալ, fourrer son nez partout – քիթը ամեն ինչի մեջ խցկել, avoir les nerfs en boule – նյարդերի կծիկ լինել* և այլն: Դարձվածքի ներքին ձևի թափանցիկությամբ կամ ոչ թափանցիկությամբ պայմանավորված առաջ է գալիս դարձվածամիավորի պատճառաբանվածության աստիճանների հիմնահարցը, որն առանձնակի կարևորություն ունի նրա իրական իմաստը ճշտելու և նույնարժեք թարգմանություն ապահովելու մեջ: Դարձվածաբանական ակտիվությամբ օժտված բառամիավորների շարքում մասնավորապես հարկ ենք համարում նշել կազմաբանությունները և կենդանունները:

Հաճախականության առումով հիշյալ բաղադրիչները նույն պատկերն ունեն ընդհանուր գրական և խոսակցական ֆրանսերենում, այն տարբերությամբ սակայն, որ խոսակցական ֆրանսերենում դրանք օժտված են ընդգծված պատկերավորությամբ ու արտահայտչականությամբ, ինչը մեր կողմից դիտվում է որպես ասության սուբյեկտի լեզվագիտակցության գնահատողական, պատճառաբանվածային և հուզական գործունեության ամբողջության դրսևորում, որի դերն առանձնապես նկատելի է դարձվածակազմության մեջ և որոշակիորեն ընդգծված խոսակցական դարձվածքներում, որոնք գրական ֆրանսերենի դարձվածքների համեմատությամբ առանձնանում են ոճական նկատելի նշույթավորվածությամբ: Այսպես, *avoir deux mains gauches – բառացի՝ երկու ձախ ձեռք ունենալ, խսկց. avoir des mains de beurre – բառացի՝ ձեռքերը կարագից լինել:*

Երկու դարձվածքները նույն իմաստն ունեն՝ *ձախավեր, անճարակ լինել, ձեռքից բան չգալ*, սակայն երկրորդն, անշուշտ, պատկերանշանային առումով շատ ավելի արտահայտիչ է: Դարձվածամիավորներում զգալի տեղ են գրավում կազմաբանությունները՝ մարդու մարմնի մաս նշանակող բաղադրիչները:

Ամենից մեծ տարածում ունեն *main, tête, œil, cœur, nez, pied, oreille, dent, doigt, bras* գոյականները: Որոշակի թիվ են կազմում նաև կենդանուն բաղադրիչները, որոնց միջոցով նկարագրվում են մարդու մարմինը կամ դրա որևէ մասը, ինչպես նաև նրա արտաքինը, բնավորության գծերն ու վարքագիծը և այլն: Ամենից ավելի տարածված են *chien, chat, cheval, âne* բաղադրիչները:

Այս գլխում չենք անտեսել դարձվածային մենիմաստության ու բազմիմաստության խնդիրները: Դարձվածքները, ի տարբերություն բառերի, անվանողական արժեք չունեն և ծառայում են լեզվի հուզարտահայտչական կողմն ապահովելուն, իրականության երևույթների նկատմամբ խոսողի վերաբերմունքն արտահայտելուն ու գնահատական տալուն, ինչն էլ սահմանափակում է դրանց բազմիմաստության զարգացումը, քանի որ որոշակիորեն ձևավորված ներքին ձևը գերակշիռ մեծամասնությամբ աղերսվում է իրականության մեկ, եզակի երևույթի հետ, հազվադեպ է առնչվում մեկից ավելի իրավիճակների, օժտված է ինքնահատուկ, պարզորոշ ու քարացած պատկերանշանով, որի պատճառով չի կարող բազմիմաստ դարձվածամիավորի նախատիպ դառնալ:

Բերենք մենիմաստ խոսակցական դարձվածքների օրինակներ, որոնք միտված չեն բազմիմաստ դառնալու.

avoir l'air d'un accident de chemin de fer (բառացի՝ երկաթուղային աղետի ենթարկվածի տեսք ունենալ) – թշվառ տեսք ունենալ, դեմքը վշտահար՝ ընկճված՝ մոայլված լինել

les jambes me rentrent dans le corps (բառացի՝ ոտքերս մարմինս են մտնում)– ոտքերս հագիվ եմ քարշ տալիս, էլ ոտք չի մնացել և այլն:

Նշենք բազմիմաստ խոսակցական դարձվածքների մի քանի օրինակ, որոնք շատ ավելի սակավաթիվ են.

brûler la chandelle par les deux bouts (բառացի՝ մումը, ճրագը երկու ծայրից վառել) – ա) անխնա ծախսել, վատնել, բ) առողջությունը, ուժերը չխնայել, սպառել,

plier bagage (բառացի՝ ճամպրուկը դարսել) – ա) չքվել, հեռանալ, բ) մեռնել, այն աշխարհը գնալ այլն:

Դարձվածքների բազմիմաստությունը երբեմն կարող է հանգեցնել համանունության: Այս դեպքում դարձվածքի նախկին և նոր իմաստները (ինչպես և առանձին բառերի դեպքում է) այնքան են հեռանում իրարից, որ այլևս չեն կապվում նույն դարձվածքի հետ և դիտվում են իբրև համանուն դարձվածքներ.

Avoir son compte – ամբողջովին հարբած լինել:

Avoir son compte – մահացու հարված ստանալ:

Երկրորդ գլխի վերջում փորձել ենք տարրորշել դարձվածային հոմանիշությունը և տարբերակայնությունը գրական և խոսակցական ոճերում՝ բերելով հայերեն և ֆրանսերեն օրինակներ: Դարձվածաբանական տարբերակների և հոմանիշների զանազանմանը նպաստում է դարձվածքի պատկերային նկարագրի դիտարկումը: Ամենատարածված տեսակետը հետևյալն է. դարձվածային հոմանիշները կարող են արտահայտել միևնույն կամ մոտ հասկացություններ, **տարբեր պատկերների**, իսկ տարբերակները՝ **միևնույն կամ շատ մոտ պատկերների միջոցով**: Ասվածի ապացույցն է հետևյալ դարձվածաշարերի համեմատությունը: Ստորև ներկայացնենք հետևյալ **հոմանշային շարքը**, որի անդամներն ունեն ընդհանուր **«անխելք, տկարամիտ, հիմար, տխմար, թուլամիտ»** իմաստը՝ արտահայտված միանգամայն տարբեր պատկերների միջոցով.

pomme à l'eau – բառացի՝ ջրի գետնախնձոր

avoir une chambre à louer – բառացի՝ վարձով տրվող սենյակ ունենալ

bête comme ses pieds – բառացի՝ հիմար ինչպես իր ոտքերը և այլն:

Վերոհիշյալ հոմանիշները գալիս են լրացնելու և ամբողջացնելու գրական ֆրանսերենի նույն իմաստն արտահայտող դարձվածքների շարքը՝ *bête comme un âne (une oie)*, *avoir l'esprit aux talons, sot en trois lettres*, և այլն: Ստորև ներկայացնենք նաև **տարբերակների** հետևյալ շարքը, որի անդամներն օժտված են նույն կամ շատ մոտ պատկերներով և ունեն նույն իմաստը.

avoir un bon (un sacré) coup de fourchette – գայլի ախորժակ ունենալ,

չափազանց շատ ուտելու անհագ փափագ՝ ցանկություն ունենալ

se noircir (se piquer, salir) le nez – սաստիկ հարբել, լուլ խմել

Ամփոփելով կարող ենք հաստատել, որ դարձվածային հոմանիշների և դարձվածային տարբերակների այս ընդարձակ բազմապիստության մեջ իրենց ուրույն տեղն ունեն խոսակցական ֆրանսերենի դարձվածաբանական միավորները, որոնք գալիս են լեզուն հարստացնելու իմաստային ու ոճական զանազան երանգներով: Երևույթը շարունակական է, քանի որ խոսակցական ֆրանսերենը անընդհատ համալրվում է կենդանի խոսքին բնորոշ նորանոր արտահայտչամիջոցներով, որոնք ասելիքին հաղորդում են գունեղ պատկերավորություն և հուզարտահայտչականություն: Միաժամանակ դրանց մի մասը գործածության ուժով գրականի կարգավիճակ է ձեռք բերում, մյուսները, որոնք օժտված են ընդգծված խոսակցական երանգով, շարունակում են մնալ խոսակցական ոճին բնորոշ միավորներ:

Երրորդ գլուխը («Խոսակցական ֆրանսերենի դարձվածաբանական միավորների պատկերային նկարագիրն ու ոճահնարների ներկայնակը») ընդգրկում է հետևյալ ենթաբաժինները. «Խոսակցական ֆրանսերենի դարձվածամիավորների պատկերային ինքնատիպությունը (հայերենի

զուգադրությամբ)», «Բանադարձումներն ու դարձույթները խոսակցական ֆրանսերենի դարձվածքներում: Ոճահնարների բազմապիստությունը»: Այս գլխում անդրադառնում ենք խոսակցական ֆրանսերենի դարձվածքների ինքնատիպ պատկերային նկարագրին: Այն ավելի ցայտուն դարձնելու համար ներկայացնում ենք ֆրանսերեն օրինակներ՝ բառացի թարգմանությամբ, հայերեն համարժեքներով, ինչպես նաև քննում ենք բնագրային օրինակներ և կատարում որոշ դարձվածքների ստուգաբանական բացահայտումներ:

Այսպես՝ **աննկատ հեռանալ, փախչել, փախուստի դիմել, ճողպրել**

mettre les voiles (բառացի՝ առագաստները բանալ, պարզել)

planter un drapeau (բառացի՝ դրոշակ գցել)

affûter ses pincés (բառացի՝ չանչերը սրել)

se faire la jaquette (բառացի՝ բաճկոնը հագնել)

se faire la malle (բառացի՝ ճամպրուկը դարսել)

prendre ses jambes à son cou (բառացի՝ ոտքերը վիզն առնել)

jouer de l'escarpin (բառացի՝ մուճակը գործի գցել) և այլն:

Հայերենում՝ **արանքը ճղել, կծիկը դնել, գրուխը պրծացնել, պուկ անել, պուկ տալ, փախս առնել, փախս տալ**, և այլն:

- Au comble de l'énerverment, ma noble maîtresse vint dans la province française se cacher, se terrer.

- Mais le roi, qu'est-ce qu'il a dit, votre roi, lorsqu'il s'est aperçu qu'elle avait **mis les voiles**.

(J. Audiberti, L'Effet Glapion, p. 204)

- Նյարդայնության գագաթնակետին հասած իմ ազնվազարմ տիրուհին եկավ ֆրանսիական նահանգ՝ թաքնվելու, ծվարելու:

- Իսկ թագավորը, ի՞նչ ասաց ձեր թագավորը, երբ տեսավ, որ տիրուհին **աննկատ հեռացել է**:

Ամենից հետաքրքրական են այն դարձվածքները, որոնք պատճառաբանված չեն, որոնց իմաստը չի բխում դարձվածքի բաղադրիչներից: Այս դարձվածքների ներքին ձևը մթազնած է, անվերծանելի և պահանջում է որոշակի պատմալեզվաբանական ուսումնասիրություն և ստուգաբանական բացահայտումներ [Lacotte⁹, Pouget¹⁰, Назарян¹¹]: Դիտարկենք մի օրինակ. **avoir du foin dans ses bottes** դարձվածքի բառացի թարգմանությունն է՝ ճոքավոր

⁹ Lacotte D. Les expressions les plus truculentes de la langue française. Paris: Larousse, 2014.

¹⁰ Pouget A. Le pourquoi des choses, origine des mots, expressions et usages curieux. Paris: Le Livre De Poche, 2009.

¹¹ Назарян А. Г. Фразеология современного французского языка. М.: Высшая школа, 1987.

կոշիկներում ծղոտ, չոր խոտ ունենալ, իսկ նշանակությունը՝ գրպանը լիքը լինել, հարուստ ունևոր՝ նյութապես ապահովված՝ փողատեր լինել: Բացատրությունը հետևյալն է. Ժամանակին ճուշավոր կոշիկների բարձրությունը որևէ դասի պատկանելու նշան էր. որքան բարձր էին ճիտքերը՝ արնքապանները, այնքան բարձր էր տիրոջ դասային պատկանելությունը: Եվ քանի որ ճիտքերը երբեմն այնքան բարձր էին լինում, որ լավ չէին գրկում սրունքներն ու խանգարում էին քայլելուն, մարդիկ դրանց մեջ ծղոտ էին լցնում: Որքան բարձր, այնքան շատ ծղոտ, այսինքն այնքան ավելի ունևոր, հարուստների դասից:

Այս գլխի վերջում անդրադարձել ենք խոսակցական ֆրանսերենի դարձվածքներում առկա բանադարձումներին ու դարձույթներին, դրանց ոճահնարային բազմապիստությանը, քանի որ դարձվածքներն ուսումնասիրելիս մշտապես անհրաժեշտություն է առաջանում դիմել ոճաբանությանը, առանց որի անհնար է դրանց համակողմանի մեկնաբանությունն ու թարգմանությունը մեկ լեզվից մյուսը:

Ուսումնասիրելով հարցին վերաբերող մասնագիտական գրականությունը՝ մենք ավելի նպատակահարմար ենք գտնում այն դասակարգումը, ըստ որի ոճական հնարները կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ ա) **բանադարձումներ** (figures) և բ) **դարձույթներ** (tropes):

Սույն դասակարգման հիմքում ընկած է Ա. Ռեյի¹², Պ. Բաքրիի¹³, Ջ. Խովանսկայայի¹⁴, Գ. Ջահուկյանի և Ֆ. Խլղաթյանի¹⁵, Ա. Բարլեզիզյանի¹⁶ աշխատություններում առաջ քաշված սկզբունքը, որը պարզորոշ մատնացույց է անում ոճական հնարների էությունը և բացահայտում դրանց բնույթը:

Ըստ հիշյալ հեղինակների, բանադարձումների գործածությունը խարսխված չէ փոխաբերական իմաստի վրա, այսինքն չկա իմաստի փոխաբերականացում կամ այլաբանություն, իմաստի «շեղում, խտտորում»: Դարձույթների դեպքում նկատի են առնվում ոճական այն հնարները, որոնցում առկա է շեղում բառապաշարային հիմնական, ելակետային, ուղղակի իմաստից: Այդ շեղումը հիմնված է ուղղակի իմաստ/փոխաբերական իմաստ հակադրության վրա: Խոսակցական ֆրանսերենի դարձվածաբանական միավորներում ուրվագծվում են ոճական ամենատարբեր հնարներ, ինչպես նաև պատկերանշանային համակարգի այն առանձնահատկություններն ու դրսևորումները, որոնք ներհատուկ են տվյալ լեզվական հանրության մշակույթին, աշխարհընկալմանը,

¹²Rey A. et Chantreau S. Dictionnaire des expressions et locutions. Paris: Le Robert, 1997.

¹³Bacry P. Les figures de style. Paris: Édition Belin, 1992, p.11.

¹⁴Khovanskaia Z., Dmitrieva L. Stylistique française. Moscou: Vysšaya Škola, 1991, p.246-269.

¹⁵Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ. Հայոց լեզվի ոճաբանություն: Երևան, Լույս հրատարակչություն, 1976, էջ 56:

¹⁶Barlézizian A. Stylistique du français moderne (figures et tropes). Erévan: Lingua, 2010, p. 6, 28.

հավատալիքներին, մտածելակերպին, հոգեբանությանը, խառնվածքին, ավանդույթներին ու սովորույթներին և այլն:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**.

1. Ֆրանսերենը՝ որպես ռոմանական առանցքային լեզուներից մեկը, աչքի է ընկնում բացառիկ հարուստ դարձվածաբանությամբ, որում իրենց տեսակարար կշռով ու ոճիմաստային առանձնահատկություններով աչքի են ընկնում խոսակցական լեզվին պատկանող դարձվածամիավորները:

2. Ֆրանսերենի դարձվածապաշարում բոլոր ժամանակներում եղել են խոսակցական ոճին պատկանող դարձվածքներ, և ժամանակի հետ այդ բառաշերտը մշտապես համալրվելով ընդարձակվել է այնքան, որ բացի դարձվածաբանական, բացատրական և երկլեզվյան բառարաններում արձանագրվելուց, նաև առանձին, ծավալուն բառարանների նյութ է դարձել:

3. Խոսակցական ֆրանսերենի դարձվածքները բազմապատկվել են, մանավանդ 20-րդ դարում, և դրանց թիվը շարունակում է աճել նաև մեր օրերում, որն, իր հերթին, վկայում է դրանց լեզվառճական ուսումնասիրության կարևորության մասին:

4. Անհերքելի է խոսակցական ֆրանսերենի դարձվածային միավորների առկայությունը գրական ստեղծագործություններում, տարբեր ժամանակաշրջանների ու գրական ուղղությունների ներկայացուցիչների գործերում (տե՛ս գրական աղբյուրների ցանկը), այդ թվում ժամանակակից հեղինակների ոչ միայն արձակ, այլև չափածո երկերում: Եվ դա բնական է, քանի որ նոր և նորագույն ֆրանսիական գրականության կերպարները հաճախ հասարակ խավի ներկայացուցիչներ են, որոնց լեզուն հենց խոսակցական ֆրանսերենն է՝ համեմված ոճին բնորոշ դարձվածքներով, որոնց պատկերավորությունն ու արտահայտչականությունը հեղինակներին շատ դեպքերում հարկադրում են գրական դարձվածքների փոխարեն առաջնություն տալ խոսակցականներին՝ դրանով իսկ ապահովելով ձևի և բովանդակության ոճական միասնությունը:

5. Ուսումնասիրված լեզվանյութի հիման վրա մենք սահմանազատում ենք «դարձվածք» և «դարձվածաբանական միավոր» հասկացություններն ու եզրույթները, որոնք լեզվաբանական աշխատություններում գործածվում են որպես հոմանիշներ: Մեզ համար «դարձվածաբանական միավոր»-ն անհամեմատ լայն ընդգրկում ունի և բուն դարձվածքից բացի նաև ընդգրկում է առաձներն ու ասացվածքները, թևավոր խոսքերը, անեծքները, մաղթանքներն ու օրհնանքները, որոնք դարձվածքների պես իմաստային մեկ ամբողջություն կազմող կայուն բառակապակցություններ են և այս կամ այն չափով օժտված են պատկերավորությամբ: Ուստի, կասկածից վեր է, որ յուրաքանչյուր լեզվի

դարձված արանությունն իր ամբողջության մեջ պատկերանշանային ուրույն ու ինքնատիպ մի համակարգ է:

6. Դարձվածքների առաջացման և լեզվում ամրագրվելու մեջ լեզվական գործոններից բացի որոշիչ են արտալեզվական գործոնները՝ բնակլիմայական պայմանները, պատմական անցյալը, ազգային հոգեկերտվածքը, մտաշխարհը, բարոյական ըմբռնումները, սովորույթներն ու ազգային բնավորության գծերը և այլն, լայն առումով՝ մշակույթի և լեզվամտածողության մեջ կայունացած ավանդույթները, որոնցով պայմանավորված արձանագրվում են միևնույն հասկացությունն արտահայտող, բայց բոլորովին տարբեր պատկերներ ամփոփող դարձվածքներ տարբեր լեզուներում, սովյալ դեպքում ֆրանսերենում և հայերենում:

7. Կազմաբանությունները, կենդանունները, ինչպես նաև սննդամթերքի անվանումներն ու շարժում, գործողություն ցույց տվող և ասացական բայերը, սերտ կապի մեջ լինելով մարդու առօրյա գործունեության հետ, հանդես են գալիս որպես դարձվածքի իմաստային կենտրոն, գերակա անդամ, և այս առումով ինչպես գրական, այնպես էլ խոսակցական ֆրանսերենում ունեն իմաստակազմիչ գործառույթ:

8. Բազմիմաստության առումով դարձվածքները, որպես կանոն, զգալիորեն զիջում են բառային միավորներին, քանի որ գուրկ են անվանողական արժեքից և ծառայում են խոսքի հուզազգայական կողմն ապահովելուն: Ինչ վերաբերում է խոսակցական դարձվածքներին, ապա դրանց գերակշիռ մեծամասնությունը մենիմաստ է, ի տարբերություն գրական դարձվածքների, որը պիտի բացատրել գրական լեզվի գործառույթների բազմազանությամբ:

9. Ֆրանսերենի գրական և խոսակցական ոճերը համեմատելիս երևան է գալիս այն իրողությունը, որ խոսակցական դարձվածքների դիմաց գրական ոճում միշտ չէ, որ գոյություն ունի դարձվածային միավոր, ինչն էլ, մեր կարծիքով, խոսակցական դարձվածքների գրական լեզու թափանցելու և վերջինիս դարձվածապաշարը համալրելու նախադրյալներից մեկն է:

10. Փաստական նյութի վերլուծությունն ի հայտ է բերում ֆրանսերենի խոսակցական դարձվածքների այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ինքնատիպ պատկերավորությունը, ոչ գրական բառերի, երբեմն նաև գռեհիկ տարրերի առկայությունը, գործածության ոլորտների որոշակիորեն սահմանափակ լինելը, որոնք, սակայն, ընդլայնվելու միտում են դրսևորում: Այդ պատճառով խոսքում ավելի հաճախադեպ է դառնում խոսակցական դարձվածքների առկայությունը, հաղորդակցմանն առավել անկաշկանդ, անմիջական ու մտերմիկ բնույթ հաղորդելը, նաև ընդգծված մենիմաստությունը, որն ավելի հստակ է դարձնում խոսքն ու ապահովում համատեքստի համարժեք ընկալումը:

11. Չուզադրումը հայերենի հետ նախ և առաջ ի հայտ է բերում այն տարբերությունները, որոնք առկա են երկու լեզուներում, դրանցից

յուրաքանչյուրի պատկերանշանային համակարգի առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային հոգեկերտվածքով, լեզվամտածողությամբ և արտալեզվական զանազան գործոններով: Ինչ վերաբերում է նմանություններին, մենք դրանք համարում ենք կա՛մ մարդկային համընդհանուր մտածողության արգասիք, կա՛մ համաշխարհային արժեք ներկայացնող կոթողներում ամփոփված դարձվածամիավորների պատճենումներ (Աստվածաշունչ, գրական զուլխգործոցներ, նշանավոր մարդկանց ասույթներ, և այլն):

12. Ֆրանսերենի ընդհանուր դարձվածապաշարում առկա դարձվածային հոմանիշների և դարձվածային տարբերակների բազմապիստության մեջ իրենց ուրույն տեղն ունեն խոսակցական ֆրանսերենի դարձվածքները, որոնք գալիս են լեզուն հարստացնելու իմաստային ու ոճական զանազան երանգներով: Երևույթը շարունակական է, քանի որ խոսակցական ֆրանսերենը անընդհատ համալրվում է կենդանի խոսքին բնորոշ նորանոր արտահայտչամիջոցներով, որոնց մի մասը գործածության ուժով գրականի կարգավիճակ է ձեռք բերում, մյուսները, որոնք ընդգծված խոսակցական երանգ ունեն, շարունակում են մնալ խոսակցական ոճին բնորոշ միավորներ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Դարձվածաբանական միավոր» հասկացության էությունը և տարատեսակները // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում 2 (17), Երևան, 2014, էջ 87-97:
2. Խոսակցական ֆրանսերենի ենթառճերը և դրանց արտացոլումը դարձվածաբանական միավորներում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում 1-2 (20), Երևան, 2016, էջ 158 -163:
3. Դարձվածաբանությունը որպես լեզվաբանական առանձին գիտակարգ և նրա տեղը խոսակցական ֆրանսերենի ենթառճերում // Բանբեր, 1 (40), Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, 2017, էջ 518-527:
4. Դարձվածային հոմանիշներ և դարձվածային տարբերակներ (ժամանակակից ֆրանսերենի նյութի հիման վրա) // Բանբեր, 1 (44), Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, 2018, էջ 561-571:
5. Խոսակցական ֆրանսերենի դարձվածամիավորների պատկերային ինքնատիպությունը (հայերենի զուգադրությամբ) // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, 2 (27), Երևան, 2019, էջ 85-98:

6. Դարձվածքի ներքին ձև և պատճառաբանվածություն (խոսակցական ֆրանսերենի դարձվածամիավորների նյութի հիման վրա) // Բանբեր, 1 (50), Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, 2019, էջ 159-166:

ШАГАНЕ ПЕТРОСЯН

СЕМАНТИКО-СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО РАЗГОВОРНОГО ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА (В СОПОСТАВЛЕНИИ С АРМЯНСКИМ)

Резюме

Французский язык, являясь одним из ведущих европейских языков, наделен чрезвычайно богатой фразеологией, в которой нашли отражение все сферы общественной жизни. И среди этих фразеологических единиц значительное место занимают фразеологизмы разговорного французского языка – неповторимые и исключительные, которые вместе с фразеологизмами литературного происхождения составляют большую часть французской фразеологии.

Объектом работы является французская фразеология с ее общими закономерностями и проявлениями, а **предмет** – изучение фразеологизмов современного разговорного французского языка с их семантико-стилистическими особенностями.

Целью исследования является оценка места и роли разговорных фразеологизмов, выявление свойственных им особенностей и их разъяснение в системе фразеологии французского языка.

Для достижения цели работы были поставлены следующие **задачи**:

1. обосновать тот факт, что фразеология является самостоятельной дисциплиной, характеризующей фразеологизмы как уникальные лингвокультурные образования.
2. представить особенности отражения подстилей разговорного французского языка в исследуемых фразеологизмах,
3. изучить проявления целого ряда особенностей, присущих разговорным фразеологизмам французского языка, в частности:
 - а) внутренняя форма и мотивированность,
 - б) компонентная активность,
 - в) полисемия и моносемия,
 - г) синонимия и вариативность.
4. сопоставление с армянским выявляет общность и различия, свойственные двум языкам, многообразии стиливых приемов, заложенных в основу образов, что делает изучаемый материал более целостным.

Актуальность темы обусловлена все возрастающим интересом как к общим проблемам фразеологии, так и фактам постоянного пополнения фразеологического запаса разговорного французского, а также необходимостью выявления его

основных особенностей имея в виду, что в этой сфере, насколько нам известно, отсутствуют специальные исследования.

Новизна данной научной работы заключается в систематизации разговорных фразеологизмов французского языка в сопоставлении с армянским на основе их сравнения с литературными вариантами и выявления их семантико-стилистических особенностей. Впервые осуществленное сопоставительное исследование с армянским делает более очевидным ряд особенностей фразеологии каждого из языков, которые остаются в тени в случае изолированного исследования и открытие которых создает новую область контрастивных исследований.

Теоретическая значимость работы заключается в выделении и систематизации характерных особенностей разговорных фразеологизмов, выявлении закономерностей, характерных для их создания и развития, что может способствовать развитию исследований, связанных с данной областью, и оценке указанных фактов, а также расширение лингвистических и культурных теорий.

Практическая ценность данной работы заключается в том, что основные результаты могут быть использованы в лекциях и семинарах по лексикологии и стилистике французского языка при составлении учебников и методических пособий, предназначенных для изучения разговорного французского, а также при составлении двуязычных словарей (французско-армянский, армяно-французский).

Методы. Наравне со всеобщим познавательным методом, широко использовались: стилистические, ассоциативные, аналитические, и, в частности, этимологические и статистические методы.

Фактический материал работы включает 1028 разговорных фразеологизмов, отобранных из различных словарей, французской художественной литературы XIX-XX веков, включающей 50 произведений авторов разных литературных направлений, которые представлены со своими эквивалентами на армянском языке в конце работы в Приложении к диссертации.

SHAHANE PETROSYAN

STYLISTIC AND SEMANTIC PECULIARITIES OF COLLOQUIAL PHRASEOLOGICAL UNITS OF CONTEMPORARY FRENCH (IN COMPARISON WITH THE ARMENIAN LANGUAGE)

Summary

French, being one of the leading European languages, is endowed with an extremely rich phraseology in which all spheres of public life are reflected. And among those phraseological units, spoken French phrases have their significant place: highly original, unrepeatable and exclusive, which, along with phrases of literary origin, form a large part of French phraseology.

The **objective** of the dissertation is to research French phraseology along with its holistic patterns and manifestations. The **subject matter** of the research is the study of colloquial phrases of Contemporary French and the stylistic and semantic features of these phraseological units.

The **aim** of the research is to reveal the role of colloquial phrases in the French phraseological system and to disclose their characteristics.

To achieve this aim, the following tasks have been set:

1. to demonstrate the fact that phraseology is an independent discipline by characterizing phrases as linguistic and cultural unique expressions of ideas,
2. to present sub-styles of spoken French reflected in phraseological units,
3. to study the manifestations of a number of peculiarities inherent in phraseology in colloquial phrases, especially in
 - a. internal form and rationale,
 - b. component activity,
 - c. polysemy and monosemy,
 - d. synonymy and variability.
4. to reveal the pictorial originality of colloquial French phrases and the multiplicity of stylistics, particularly in combination with the Armenian ones.

The **topicality** of the current research is first and foremost the increasing interest towards the issues associated with phraseology. In addition, the research emphasises the fact that the vocabulary of the spoken French language is constantly expanding, and there is an urgent need to identify its main features, taking into account that, to our knowledge, no comprehensive study has been conducted in this field. It is worth mentioning that for the first time an attempt is made to conduct a contrastive analysis of French phraseological units with those of Armenian: the latter makes apparent the peculiarities of each language which cannot be disclosed in isolation. Hence, the

revelation of these features generates new fields of afresh areas for contrastive research, thereof.

The **novelty of the research** is conditioned by the systematic presentation of colloquial phrases within the framework of large-scale French phraseology, based on the identification of certain features through juxtaposing them with literary phrases and comparing with the Armenian ones.

The **theoretical value** of the dissertation is the identification and systematization of features of colloquial phrases, and revelation of the patterns specific to their creation and evolution which can contribute to the development of research related to the field, as well as the expansion of linguistic and cultural theories.

The **practical value** of the study lies in the possible future application of its results in courses of Lexicography, particularly in Bilingual Lexicography (French-Armenian, Armenian-French), Stylistics, Phraseology, in textbooks and manuals on the study of practical French.

The **methodological framework** includes the universal method of cognition and methods of stylistic, semantic and componental analyses. In addition, incorporated etymological and statistical methods of analysis have also been applied.

The **factual material** of the dissertation is based on 1028 contemporary French colloquial phrases picked up from various dictionaries and 50 French literary works, and presented with their Armenian equivalents in the Appendix at the end of the dissertation.

